

ԷՂՈՒՄԻ ԵՎ ԱՎԱԳՅԱՆ

ՄԱԿԸՆԹԱՑՈՒԹՅՈՒՆ

Գլուխը անասելի ցավում էր: Ինչի՞ց՝ չէր հասկանում: Ու երբ զանգը հնչեց, նա անմիջապես չհասկացավ, թե որտեղ է: Այնտեղ էլ էր զանգը հնչում, վաղ առավոտյան՝ աշխատանքի համար և երեկոյան՝ քնելու: Ծանր վեր կացավ, հավաքեց գրքերը, դրեց պայուսակը: Ուսանողական անցած տարիներից միայն սա էր մնացել, իր նման հոգնած, մոլոր, անտարբեր: Ուրիշ ոչ մի հիշատակ անցած օրերից: Նոր դասախոսներ, նոր ընկերներ, ջահել ուսանողներ՝ անհոգ, աշխույժ: Ինքը ճերմակ ագռավ այս սև գլուխների ծովում:

– Անդո, – ձայնեց կողքին նստող ջահելը, – թոշակի օր է...

Շրջվեց, օտարոտի նայեց: Ընկերն էր, Աշոտը:

– Գիտեմ, – ասաց ու լռեց:

– Գնանք, հը՞...

– Դու գնա... Ես հետո... – Ականջներում ճամբարի զանգերն էին հնչում:

Նայեց դուրս: Նույն փողոցն էր, Աբովյանը, բայց աղմկոտ, լեցուն: Դուկասյանի այգին էլ նույնն էր, արձանը, փայտե կամարները, մագլցող կանաչով: Աստղադիտարանը: Նստարանը նույնպես: Այստեղ շատ էր նստում Աշխենի հետ: Նայեց վեր... Միայն մոռումեմտն էր նոր: Կառուցել էին իրեն տանելուց հետո: Սև տուֆե պատվանդանին կանգնած էր նա՝ շինելը հագին, աջ ձեռքը ծոցում, ծանր, բրոնզե հայացքով նայում էր քաղաքին:

– Լավ, – ասաց ընկերը, – ցածում կսպասեմ:

– Մի՛ սպասիր, կուշանամ:

Աքտորից հիշատակ մնաց երկար, փարթամ մորուքը, որ սկզբում սև էր, հետո, տարիներ անց, ճերմակ դարձավ: Հիշատակ մնաց մեկ էլ չարչրկող, բզկտող ցավը, որ միշտ նրա հետ էր: Հոգին էր ցավում: Այդ ցավը սկզբում խեցու մեջ ընկած ավազահատիկի պես փոքր էր, բայց տարիների հետ մեծացել էր:

Ամենից ուժեղը կորած, կորցրած ջահել օրերի մորմոքն էր: Բուն էր դրել նրա հոգում վաղուց և ագռավի պես անդադար կռավում էր:

Առաջին անգամ զգաց երևանյան բանտում: Հետո մեծացավ էտապի ճանապարհին՝ Բաքվից մինչև Կրասնովոդսկ, մինչև Մագադան...

Պատերազմը նոր էր սկսվել: Ուսանող էր: Հորը մի քանի տարի առաջ բանտարկել էին: Այն թվականին էր, երբ շատերին տարան: Թե ինչի տարան, հետո հասկացավ, տարիներ անց: Կոշկակար էր, մի նեղլիկ խանութ ուներ Խորհուրդների

փողոցում: Սմբած, ինքն իր մեջ քաշված մարդ էր, ինչպես բոլորն էին ասում ուրբաթախոս: Վախից էր, հետո հասկացավ, վախից: Բայց զարմանալի բան կատարվեց: Երբ եկան տանելու, հոր աչքերում այլևս վախ չկար: Նույնիսկ հանդգնություն նկատեց: Երբ խուզարկում էին, նա անդադար խոսում էր: Ուրբաթախոսը բացվել էր, ինչպես մայրը ասաց հետո: Խուզարկողներից մեկը, որ զայրացկոտ էր երևում, թնդաց. «Համբերիր, տեսնենք ենտեղ ո՞նց ես խոսելու»:

Երբ հորը տարան, մայրը լաց եղավ, անիծեց: Իսկ ինքը սաստեց մորը: Թե մեղք չունի, բաց կթողնեն: Անմեղին չեն բանտարկում: «Է՛, որդի, – ասաց մայրը, – էս ուղտը որ մեր դռանն է չոքել, արդար, մեղավոր չի ջոկում»:

Մակընթացությունը սկսվել ու բարձրանում էր: Խանջյանի սպանությունը... Չարենց, Բակունց... դասախոսներից շատերի բանտարկությունը, որոնք արտասահմանում էին համալսարան ավարտել... Ու դրա հետ էլ առաջընթաց, Մագնիտոգորսկ, Չեչուսկինցիներ, Օտտո Շմիդտ: Եվ նա անմեղ տեղ՝ նկարներում, ռադիոյով, մարդկանց սրտերում...

Հավատը կար: Բայց նրա հոգում արդեն վախի հետ ծնվել էր ցավը: Անորոշ, անհասկանալի ցավը: Ի՞նչ է կատարվում, Ո՞վ է մեղավորը:

Երբ կեսգիշերին տուն եկավ, ցավը պոռթկաց նրա մեջ: Ցավը միշտ ուժեղանում է գիշերով: Այդպես էլ եղավ նրա հետ:

Այդ օրը շատ ուշ տուն եկավ: Ասես հոգին վկայում էր: Երկար զբոսնեց Աշխենի հետ: Վկայում էր, որ վերջին անգամ է...

Երբ վերադարձավ, ամեն ինչ նույնն էր՝ այգին, աստղադիտարանը, նստարանը: Միայն երևանյան գիշերների հմայքը չկար: Պատճառն այն էր, որ հիմա փողոցի բարդիները չկան, առվակները, որ ազատ խոխոջում էին, հիմա լռել են, երևի այդ կորուստներն էին պատճառը, որ Աշխենը չսպասեց...

Ցնցում եղավ, երկրաշարժի նման մի բան: Բանտի բակում տեսավ իր դասախոսին: Եթե նրան էլ, այդպիսի մարդուն... Իմացավ, որ նամակ է գրել նրան: Միամիտ, հավատացող մարդ: Նրան, վաթսուներեք տարեկան այդ գիտնականին մեղադրել էին զինված ապստամբություն կազմակերպելու մեջ: Հազիվ էր քայլում, աչքերը չեն տեսնում և... զինված ապստամբություն... Եվ գրել էր, որ ինքը բացարձակապես անմեղ է, բայց եթե բանտում մնալը օգտակար է պետությանը, կմնա, իսկ եթե ոչ, խնդրում էր ազատել և թույլ տալ զբաղվել իր գիտական աշխատանքով: Հավատացել ու գրել էր նրան... առաջնորդին:

Այդտեղ էր, այդ օրերին, որ ծովի մակընթացության պես բարձրացավ ատելության ալիքը:

Միջանցքում մութ էր: Կանգնեց երկար: Տարիներ առաջ էլ այստեղից էին ստանում: Գրպանը դրեց առաջին թռչակը, քառասունհինգ ռուբլի: Տանը ուտելիք չկար: Մայրը հիվանդ էր: Հարկավոր էր շուկա գնալ:

– Անդո, ստացա՞ր, – Աշոտն էր:

– Ստացա:

– Տու՞ն ես գնում:

– Չէ՛, ինձ մի սպասի... Ես հետո...

Դուրս եկավ, անցավ փողոցը: Շուրջը չէր նայում: Վախենում էր հայացքը սահի, բարձրանա վեր, այնտեղ, ուր մոնումենտն էր: Գլուխը կախ տրամվայ բարձրացավ: Մարդիկ զարմացած նայում էին: Գուցե մորուքն է մեղավոր, երկար, ճերմակ մորուքը:

Թեկուզ տարիներով անձրև չգա, շուկայի մոտ միշտ ցեխ է: Անցավ փողոցը: Չոր տեղերում, կղզյակների վրա, ուղղակի գետնին ապրանք էր լցված. հին ու նոր կոշիկներ, կոստյումներ, վերարկուներ, գործիքներ, ինչ ուզես: Քայլում էր ու նայում: Հենց այնպես, իրեն ոչինչ պետք չէր:

Անսպասելի կանգ առավ: Մի պառավ բամբակած բաճկոններ էր ծախում:

Այդ բամբակած բաճկոնի մեջ տեսավ նրա կիսանդրին. կանաչ ճենապակուց էր, գեներալիսիմուսի ուսադիրներով, գլխարկը գլխին, փայլուն:

Թե ինչպես անցավ տասը տարին չի հիշում: Առաջին տարին Աշխենից նամակներ էր ստանում: Եվ մորից: Հետո Աշխենի նամակները դադարեցին: Իսկ մայրը շարունակում էր: Թղթի այդ եռանկյունի պատառները, լցված մոր արցունքով ու հույսով, պահեցին նրան: Կյանքի համալսարանը սկսեց երևանյան բանտից, տարբեր էտապների ընթացքում հասունացավ: Եվ ավարտեց այդ համալսարանը հեռու Սիբիրում:

Էտապը Մագադան էր գնում: Գնացքը երկար էր, ապրանքատար վագոններ՝ լիքը մարդկանցով: Չորս կողմը՝ անտառ: Ծուլլ ու դանդաղ ընթացք: Ցուրտը՝ անտանելի: Գնացքի վագոններում իրար կպած՝ սառչում էին:

Թե ինչու այդ օրը մոտեցավ փշալարով ծածկած լուսամուտին՝ չհասկացավ: Ասես մեկը կանչում էր: Չգվեց, հասավ համարյա թե տանիքի տակ բացված այդ ճեղքին: Փշալարը սառն էր ու կրակի պես այրեց դեմքը:

Դրսում մշուշված երկինք էր, արևի սառը սկավառակ ու սև, անվերջ թվացող անտառ: Եվ սոճիների դող...

Անսպասելի դիմացը մի ուրիշ գնացք կանգնեց: Նույն գորշ ապրանքատար վագոններն էին, փշալարով ծածկված լուսամուտներով: Մեկը նայեց իրեն: Մեկը... խեղդված ճչաց: Իրեն թվաց, թե ամբողջ ուժով գոռաց.

– Հայր, այդ դու՞ ես:

Տեսիլք չէր: Դիմացի վագոնի նեղլիկ լուսամուտից, իր նման դեմքը այրող փշալարին սեղմած՝ նրան էր նայում հայրը:

Հետևից, վագոնի ներսից մեկը ցած քաշեց: «Իջիր, ֆրաեր», – գոռացին:

Իջնել չէր ուզում: Ինչու՞: Քանի՛ տարի հորը չէր տեսել: Հորը, որին նա այն ժամանակ չհասկացավ: Հիմա է հասկանում: Հրեց իրեն ցած քաշողին, հարվածեց արմունկով:

– Հայր... հայրի՛կ...

Լավ էր Սոլովեյը խառնվեց: Մեկը կար այդպիսին: Վագոնի տիրակալն էր: Գող էր Իվան Սոլովեյը, ու բոլորը նրան Սոլովեյ Ռազբոյնիկ էին ասում: Ծանոթացել էին Մագադանի ճանապարհին: Տնից ստացած ամբողջ ծխախոտը (չգիտեր մայրը ինչու էր ծխախոտ ուղարկել, երբ ինքը չէր ծխում) տվել էր նրան:

– Հայրի՛կ...

Նորից քաշեցին հետևից, քիչ մնաց շալվարը վրայից հանեին: «Ֆրաեր», քեզ եմ ասում: Լավ էր Սոլովեյը խառնվեց: «Գադ, ի՞նչ ես վրա ընկել մարդուն: Չե՞ս տեսնում, հորն է հանդիպել, թող խոսի»:

– Հայրի՛կ...

Հայրը վերջապես լսեց: Դեմքն ավելի սեղմեց փշալարին, այնպես, որ փշերը խրվեցին այտերը, քթարմատի մեջ, ճակատը:

– Անդրանի՛կ...

Միայն հայրն էր անունը լրիվ տալիս: Աչքերը մշուշվեցին, արցունքները սառած գնդիկներ դարձան:

– Ես եմ... Ո՞նց ես, հայրիկ:

– Անդրանիկ: Ես մեղք չունեմ, հասկանու՞մ ես, ես մեղք չունեմ: Մեղքը քո անունի մեջ է: Որ նրա զինվորն եմ եղել, որ կռվել եմ...

– Գիտեմ, հայրիկ:

– Ինձ ներիր, որդիս:

– Ինչու՞, ինչու՞...

– Որ դու այդտեղ ես: Բայց ես... ասում եմ... մեղավոր չեմ...

– Քեզ չեմ մեղադրում, հայրիկ:

– Անդրանիկ... Նա է, նա է... մեղավորը...

– Գնացքը շարժվեց ու վերջին բառը ձգվեց, զնգաց այնպես, որ նրան թվաց, թե հայրը «բեղավորը» ասաց:

Այստեղ էր, որ ատելությունն ամբողջ թափով պոռթկաց: Նա զայրացած բռունցքով հարվածեց, փշալարը ծակոտեց ձեռքը: Բայց նա ցավ չզգաց, չտեսավ արյունը: Ցավը հոգում էր, արյունը՝ խռոված:

Իջավ: Կծկվեց վագոնի անկյունում: Սուղվեյը խոժոռ նայեց նրան: Մյուսներն էլ խոժոռ էին, բայց ոչինչ չասացին: Նա փակեց աչքերը և տեսավ նրան ամբողջ հասակով, շինելը հագին: Լսեց նույնիսկ նրա կոպիտ սապոգների ձայնը և կարմիր, կարմիր մի դաշտ՝ լիքը լցված դիակներով:

Հետո, դա արդեն Մագադանում էր: Աշխատում էր գրասենյակում: Այսքան տարիների դաժան աշխատանքից հետո թեթև գործ էին տվել: Բանտարկյալների նամակներն էր ստանում, բաժանում, երբ պետք էր լինում՝ նրանց համար նամակ էր գրում:

Սենյակը փոքր էր, բայց ինչ: Գոնե տաք էր: Մի սեղան, մի քանի աթոռ: Միակ տանջող բանը նրա նկարն էր՝ շինելը հագին, ծանր ու զորեղ սապոգները խրած հողի մեջ: Երբ մենակ էր լինում, հայիոյում էր: «Քեզ էլ, բեղավոր, պետք է մեր օրին զգեին, որ յոթ անգամ բանտից ու աքսորից չփախչեիր»: Ասում էր ու շուրջը նայում: Վախենում էր: Բոլորն էլ վախենում էին:

Բայց Սուղվեյ Ռազբոյնիկը չվախեցավ: Եկավ: Մորը պիտի նամակ գրեր: Կաթվածահար, մենակ, ապրում էր Տամբովի գյուղերից մեկում: սուղվեյը, հազար դատ ու դատաստան, ճամբար ու էտապ տեսած այդ մարդը լաց էր լինում: Բռնել էին անմեղ տեղը: Նախագահը պրծել էր, իրեն էին դատի տվել: Եվ ընկել էր մարդը: «Ախպեր, – ասում էր, – թե մեր բանտը ընկար, պրծավ: Հոգիդ սատանային ես ծախելու»: Սուղվեյը պատի նկարը տեսել էր: Շա՛տ էր տեսել: Բայց այդ օրը, երբ նամակը գրեց, զգաց, որ ձեռքերը դողում են: Նայեց երկար, տնքաց ու անսպասելի թքեց.

– Գուտալինշչիկ:

Առաջին անգամ լսեց, որ մեկը բարձրաձայն նրան հայիոյի: Վախեցած շուրջը նայեց: Գուտալինշչիկ, կոշիկ մաքրող: Գող տղաները նրան այդպես էին ասում, գիտեր: Բայց թաքուն, իրար մեջ:

– Ինչ է, վախեցա՞ր, – տնքաց Սուղվեյը: – Ձեզ նմանների տեղն է:

– Ես, – ասաց նա, – չեմ վախենում: Ի՞նչ ունեմ կորցնելու:

– Եվ քանի էդպիսին եք, գտնելու բան էլ չունեք...

Կանգ առավ: Շուկան դժժում էր, աղմկում: Գուցե շուկան չէր: Գուցե ականջներն էին այդպես դժժում: Ասես աչքերին չէր հավատում: Այս զիզի-բիզի բաների, այս թափոնի ու աղբի մեջ նորից նա էր՝ կանաչ, ճենապակյա: Դեմքը

ինքնավստահ էր, գոհ: Միայն աչքերն էին զարմանալի: Անբիբ, դատարկ, բայց այդ կանաչ կլորության մեջ անգամ դաժանություն կար:

Մի անգամ ճամբարը կինո էին բերել: Միայն մեկ անգամ: Բանտարկյալները խառնվել էին իրար: Հոգնած էին, բայց հենց մի բան կերան, վազեցին մեծ բարաքը: Պատին սավան էին կպցրել, նստարաններ էին դրել: Երբ հավաքվեցին, սկսվեց: Առաջնորդի ելույթն էր համագումարում: Բոլորը լուռ էին, մի տեսակ քաշված, սսկված: Նա ասես հեռավոր Մոսկվայից, Կրեմլից եկել էր, Սիբիր հասել ու խոսում էր: Դանդաղ էր խոսում, ծանր: Ամեն մի բառը, ոնց որ կռանի հարված, իջնում էր բանտարկյալների խուզված գլխներին, հուզված սրտերին:

Կողքին նստածը փնթփնթաց, գուցե հայհոյեց: Նրան հետևեց մյուսը: Բարաքում քրթմնջոց ընկավ: Հոգնած էին, տանջված: Ջայրույթը քիչ էր, նորն ավելացավ:

Անսպասելի մեկը ելավ տեղից: Մթության մեջ նրա ստվերը ծածկեց էկրանը, մթնեցրեց: Բարձրացրեց ձեռքը.

– Դալո՛յ, դալո՛յ գուտալինշչիկա...

Ջայնը ուժեղ էր, լարված: Բարաքն իրարով անցավ: Ջինվորները գլուխները կորցրած, վազեցին նստարանների արանքով:

– Դալո՛յ...

Սուլովեյն էր գոռում: Նրան բռնեցին անմիջապես, հետն էլ մի քանիսին, որոնք կատաղի սուլում էին: Կինոն ընդհատվեց:

Գործը երբ կենտրոն հասավ, շատ բարդացավ: Սուլովեյ Ռազբոյնիկը նորից հինգ տարի ստացավ: Նրա հետ էլ՝ շատերը:

Հին ճամբարը ցրիվ տվեցին:

Մի տարի անց, դա արդեն Ալդանում էր, տղաներից մեկը գիշերով մոտեցավ նրան և, շուրջը նայելով վախեցած շշնջաց.

– Նա մեռել է:

– Ո՞վ, – հարցրեց զարմանքով, – չնայած գիտեր, թե ով:

– Մեր բոլորի հայրը... Չկա... Մեռավ... Նա, որ երկրի մերը... անիծեց...

Գիտեր, որ կյանքում կա մահ և կա ամեն ինչի վերջ: Բայց չհավատաց:

– Մեռե՞լ է... Նա... Անմահը... Չարի վերջը եկավ...

– Վե՞րջը, – ծիծաղեց: – Վերջ չկա: Մարդիկ կան, որ մեռնելուց հետո էլի ապրում են... Իր նմանների մեջ: Ոչինչ չի փոխվի, կտեսնես...

Փոխվեց: Երկու տարի անց կանչեցին, ձեռքը մի թուղթ տվեցին: Արդարացվել է և գործը՝ կարճվել «հանցակազմի բացակայության պատճառով»: Չհասկացավ, ու՞մ բացակայության պատճառով, ինչի՞: Եկավ: Վերադարձավ բազում

կորուստներով: Քաղաքում չէին գրանցում: Սովորել էր ուզում, չէին թողնում: Ջայրացավ: Մի՞թե նա դեռ ապրում է: Մի՞թե ոչինչ չի փոխվել: Այդ բոլորի համար մի ամբողջ կյանք էր պետք: Իսկ այդ կյանքը միակն էր ու մեկ անգամ տրված:

– Ծախում ես, – հարցրեց:

Պառավ կինը աշխուժացավ, ելավ նստած տեղից, ձեռքը զցեց բամբակած բաճկոնին:

– Ուզում ես...

– Բաճկոն չեմ ուզում:

– Շապիկ կուզե՞ս:

– Սա եմ ուզում, – մատով ցույց տվեց կիսանդրին:

– Յա՛, – զարմացած նայեց դիմացիներին: Ես մորուքավոր, տերտերի նման մարդը ի՞նչ է ուզում:

– Ինձ շորեր պետք չեն: Ինչ ունեմ՝ հերիք է: Ասում եմ, արձանը ծախում ես:

– Խի՞ չեմ ծախում: Համա ուզող չկա: Ես էլ շորի հետ եմ տալիս:

– Ինձ շոր պետք չի, – զայրացավ: – Բան եմ ասում, ծախում ես:

– Վա՛յ, ինչի՞ բարկացար, ա՛յ մարդ: Ուզում ես՝ առ: Ինչ կտաս՝ տուր, գտած բան է:

Ձեռքը գրպանը տարավ: Առանց հաշվելու հանեց, տվեց պառավին: Քրտինքը լարումից աչքերն էր լցվում, ձեռքերը դողում էին: Պառավը վախեցած նայեց: Աչքերում դաժան մի զայրույթ կար: Վերցրեց գետին ընկած վերնաշապիկներից մեկը, կիսանդրին փաթաթեց մեջն ու փախավ:

– Բարով վայելես, – հետևից փնթփնթաց պառավը: – Էդ մարդը հո գիժ էր:

Լավ էր, որ մայրը տանը չէր: Կիսանդրին դրեց հատակին, վերնաշապիկը մի կողմ նետեց: Կանաչ դեմքին դաժան ժպիտ կար: Նոր նկատեց: Իսկ աչքերը, աչքե՛րը, չնայած անբիբ, նրան էին նայում չարությամբ: Բարձրացրեց, վեր հանեց, ուզում էր գետնով տալ, բայց հապաղեց: Իջեցրեց ու արագ խոհանոց վազեց: Գլուխը կորցրել էր: Լավ էր, որ տանը ոչ ոք չկար: Գտավ հոր գործիքների արկղը: Փնտրեց: Մուրճն էր ուզում գտնել, չէր կարողանում: Անկյունում մաշված մի պայուսակ տեսավ: Նայեց մեջը: Փալասներ էին: Մի կողմ նետեց: Ձեռքը ինչ-որ կոշտ բանի դիպավ: Վիրակապի պես երկար շորը չէր քանդվում: Փորձեց ատամներով: Թղթեր էին՝ հին, մաշված: Մեկի մեջ նա Գևորգյան խաչ գտավ: Հայրը երբեք ցույց չէր տվել: Նայեց, թղթի վրա ինչ-որ բան էր գրած, մանր, գունաթափ տառեր էին: «Դիլմանի հերոսին», տակը ստորագրություն կար. «Ջորավար Անդրանիկ»:

Եվ նա լռում էր: Իսկ ինքը չգիտեր, չէր հասկանում: Տարիներ, արքայ, տառապանք էր պետք հասկանալու համար: Նորից ատելությունը մակընթացության ալիքի պես բարձրացավ: Շունչը կտրվում էր: Նայեց նորից: Ահա մուրճը, դրա համար էր եկել: Կուռքը փշրելու ժամանակն էր...

Վերցրեց մուրճը, թափով հետ դարձավ: Կիսանդրին իր անբիբ աչքերով նորից նրան էր նայում: Բարձրացրեց մուրճը: «Դու ես, – գոռաց, – դու ես իսկական լրտեսը, ժողովրդի թշնամին, դու...»: Արձանի գլուխը մի հարվածով երկու կես եղավ: Կարկանդակ: Մի՞թե այսպես շուտ, այսպես հեշտ... Ոչ, մեռելներ կան, որոնք չեն մեռնում: Հարվածեց: Նորից հարվածեց: Անզոր կատաղություն: Հասկանում էր, բայց մակընթացությունը չէր իջնում, տեղի չէր տալիս: Չոքեց և սկսեց ավելի արագ հարվածել: Նույնիսկ չէր զգում, թե ինչ կատաղի ուժ է պոռթկում իր մեջ...

Երբ վեր կացավ, հատակին, շորերի վրա ավազի պես մանր կտորտանքն էր միայն: Ոչինչ չէր մնացել: Մուրճը մի կողմ գցեց: Ու անսպասելի ամեն ինչ ունայն թվաց, ունայն ու ծիծաղելի: Մի՞թե սրանով վերջացավ ամեն ինչ: Չէ՛, չվերջացավ...

Լուռ հավաքեց փշրանքն ու արագ լցրեց վերնաշապիկի մեջ: Պետք է այս բոլորը աղբանոց նետել ու մոռանալ, մոռանալ:

Բայց կարո՞ղ է մոռանալ և ինչպե՞ս...

Առավոտյան, երբ դասի էր գնում, մի պահ կանգ առավ համալսարանի մուտքի մոտ: Աբովյան փողոցը եռում էր սովորականի նման, դիմացը Ղուկասյանի այգին էր, կամարը և պատուտակները, խորքում աստղադիտարանն էր, որտեղ փորձում են իմանալ այլ մոլորակների առեղծվածը, մոռացած սեփականը: Աստղադիտարանի կողքին Աշխենի նստարանն էր ու նստարանին ծվարած հուշը: Ամեն ինչ կորել էր, մնացել էր միայն Աշխենի նստարանը:

Ծանր մտքերից պոկվեց: Չգիտես ինչու վեր նայեց, չնայած չէր ուզում: Բայց նրան թվում էր, թե երեկվանից հետո, առհասարակ այս բոլորից հետո, նա այնտեղ, պատվանդանին չի լինելու: Նայեց ու ականջներում ղողանջեցին ճամբարային զանգերը: Իսկ նա՞: Նա դեռ կանգնած էր՝ շինելը հագին, աջ ձեռքով գլխարկը բռնած, ծանր սապոգները խրած պատվանդանի բետոնի մեջ: Կանգնած էր առաջվա նման, ասես ոչինչ չէր փոխվել, և դաժան հայացքով նայում էր քաղաքին: